**Ուղեցույց**
հայ գրականության օլիմպիադայի հանրապետական փուլի
հանձնաժողովի և մասնակիցների համար

*«Բոլորն այժմ կարդալ գիտեն, ուրեմն փառք կարդացածը հասկացողին...»:*

Պարույր Սևակ

Սույն հուշաթերթը հասցեագրված է հայ գրականության օլիմպիադայի հանրապետական փուլի ստուգող հանձնաժողովին և մասնակիցներին: Հուշաթերթով ներկայացնում ենք օլիմպիադայի հանրապետական փուլի՝

- առաջադրանքների շրջանակներն ու ձևաչափերը,
- առաջադրանքների կատարմանը ներկայացվող պահանջներն ու մոտեցումները,
- ստուգման գործընթացին ներկայացվող պահանջներն ու մոտեցումները,
- գնահատման միավորներն ըստ բաղադրիչների:

**Առաջադրանքների շրջանակներն ու ձևաչափերը**

- Առաջադրանքները կազմվելու են հայ գրականության դասական և ժամանակակից գրողների ծրագրային և լրացուցիչ ընթերցանության համար նախատեսված արձակ և չափածո գործերի, ինչպես նաև բանահյուսության նմուշների հիման վրա:
- Առաջադրանքները հիմնականում ներկայացվելու են ըստ Բլումի աստիճանակարգի:

**Առաջադրանքների կատարմանը ներկայացվող պահանջներն ու մոտեցումները**

- Հանրապետական փուլում մասնակիցն աշխատելու է բնագրերով կամ բնագրերից վերցված հատվածով, որը տրվելու է առաջադրանքներին կից (հանրապետական փուլի համար առաջադրանք կարող էր ձևակերպվել նաև առանց բնագիր կամ հատված կցելու):
- Գրականության օլիմպիադայի մասնակիցը պիտի նկատի ունենա, որ բարձր են գնահատվում գրականության իմացությունը, ստեղծագործական կարողությունները, երևակայության թռիչքն ու պատկերավոր մտածողությունը: Տվյալ որակները միշտ կօգնեն մասնակցին հետաքրքիր ու ինքնատիպ մոտեցում ցուցաբերելու առաջադրանքների լուծմանը: Աշխատանքը կդիտարկվի հաջողված, եթե մասնակիցը կիրառել է հարուստ ու բազմազան բառապաշար, պատկերավորման միջոցներ, լեզվառճական հնարներ, դրսևորել է վերլուծելու, դատողություններ անելու հմտություններ, ինչպես նաև խոսք կառուցելու ինքնօրինակ մոտեցումներ:

**Ստուգման գործընթացին ներկայացվող պահանջներն ու մոտեցումները**

**Պատասխանները գնահատելիս հաշվի են առնվում.**

- թեմայի/տեքստի ընկալման աստիճանը,
- ասելիքի փաստարկվածությունը,
- տեքստային նյութի ճիշտ և տեղին կիրառությունը,
- ստեղծագործական ու վերլուծական մտածողությունը,
- ինքնուրույն եզրահանգումներ կատարելու ունակությունը,
- դիրքորոշում արտահայտելու կարողությունը,
- խոսքի տրամաբանական կառուցվածքը,
- ոճական բազմազանությունը,
- լեզվական գրագիտությունը:

Ուշադրություն

- Տեքստը վերաշարադրել չի թույլատրվում։
- Ստուգվում է մտածողությունը, ոչ թե սոսկ հիշողությունը։
- Ընդունելի են բոլոր հիմնավորված մեկնաբանությունները, որոնք առաջադրանքի շրջանակում են։

Կարևոր

Նախապես գրված միակ ընդունելի կամ «կատարյալ» պատասխան, համաձայն որի պիտի ստուգվի աշխատանքը, չի ենթադրվում, քանի որ նախ՝ գիտելիքների մեխանիկական վերարտադրություն պահանջող առաջադրանքներ չկան, հետո՝ պատասխանների «բանալի» տալը ակամա ստիպում է, որ ստուգողը գրավորին մոտենա տրված կառույցների շրջանակում՝ առանց շեղվելու դրանցից։ Արդյունքում՝

- ✓ այլ ձևակերպումները համարվում են շեղում,
- ✓ գրավորը գնահատվում է ցածր,
- ✓ ինքնուրույն մտածողը հայտնվում է ոչ շահեկան վիճակում։

***Աշխատանքի ծավալը առաջնային չէ. անհրաժեշտ է, որ դիտարկումները լինեն ըստ ամենայնի հիմնավորված։***

***Տարբերվող, ինքնատիպ, բայց հիմնավորված մեկնաբանությամբ աշխատանքը ընդունվելու և գնահատվելու է՝ անկախ ծավալից։***

Միավոր չի տրվում հետևյալ դեպքերում.

- Պատասխանն ամբողջությամբ վերաշարադրանք է։
- Գաղափարը չի բխում տրված նյութից։

Միավոր է հանվում, երբ առկա են.

- ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- բառագործածության ու շարադասական սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- մտքի ձևակերպման սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար),
- հարակից սխալներ (1 միավոր՝ յուրաքանչյուր սխալի համար)։

**9-12-րդ դասարաններ.** աշխատանքներին տրվում է 50-ական միավոր։

- Յուրաքանչյուր առաջադրանքի դիմաց գրված է նախատեսված առավելագույն միավորը։
- Չափածո խոսքի շուրջ ստեղծագործական-վերլուծական շարադրանքը գնահատելու համար նախատեսված է առանձին սանդղակ՝ ներկայացված ըստ համապատասխան բնութագրիչների, որը կհեշտացնի գնահատման գործընթացը։

❖ **Ստորև ներկայացնում ենք բանաստեղծության ստեղծագործական-վերլուծական շարադրանքի գնահատման սանդղակը։**

| Մ-ր | Նկարագրությունը |
|---|---|
| 10 | 1. Ըմբռնել է բանաստեղծության հիմնական թեման, գաղափարը, կարողացել է վերաձևակերպել և իր բառերով ներկայացնել բանաստեղծի ասելիքը:<br>2. Կիրառել է հարուստ բառապաշար և պատկերավորման միջոցներ, բանաստեղծության արտահայտչամիջոցներն իր շարադրանքում կիրառել է նորովի:<br>3. Վերլուծել է բանաստեղծությունը, անդրադարձել է բանաստեղծության խորհրդանիշին:<br>4. Արժևորել և գնահատել է բանաստեղծությունը, հիմնավորել է իր վերաբերմունքը: Դրսևորել է երևակայություն և ստեղծագործական մոտեցում:<br>5. Շարադրանքը լեզվական առումով անթերի է. հաշվի է առել հայերենի ոճական և քերականական առանձնահատկությունները: |
| 9-8 | 1. Ըմբռնել է բանաստեղծության հիմնական թեման, գաղափարը, կարողացել է վերաձևակերպել և իր բառերով ներկայացնել բանաստեղծի ասելիքը:<br>2. Կիրառել է հարուստ բառապաշար և պատկերավորման միջոցներ, բանաստեղծության Արտահայտչամիջոցներն իր շարադրանքում կիրառել է նորովի:<br>3. Վերլուծել է բանաստեղծությունը, անդրադարձել է բանաստեղծության խորհրդանիշին:<br>4. Արժևորել և գնահատել է բանաստեղծությունը, հիմնավորել է իր վերաբերմունքը: Ստեղծագործական մոտեցում չի դրսևորել:<br>5. Շարադրանքը լեզվական առումով անթերի չէ. Թույլ է տվել ուղղագրական և կետադրական 1-2 սխալ: |
| 6-7 | 1. Ըմբռնել է բանաստեղծության հիմնական թեման, կարողացել է մասամբ վերաձևակերպել և ներկայացնել բանաստեղծի ասելիքը:<br>2. Բառապաշարը հարուստ չէ. բանաստեղծության արտահայտչամիջոցները կիրառել է նույնությամբ:<br>3. Վերլուծել է բանաստեղծությունը, անդրադարձել է բանաստեղծության խորհրդանիշին:<br>4. Արժևորել և գնահատել է բանաստեղծությունը, հիմնավորել է իր վերաբերմունքը:<br>5. Շարադրանքը լեզվական առումով անթերի չէ. թույլ է տվել ուղղագրական, կետադրական, բառի գործածության 3-4 սխալ: |
| 4-5 | 1. Մասամբ ըմբռնել է բանաստեղծության հիմնական թեման, կարողացել է կցկտուր ներկայացնել բանաստեղծի ասելիքը:<br>2. Բառապաշարդ հարուստ չէ. բանաստեղծության արտահայտչամիջոցները կիրառել է նույնությամբ:<br>3. Մասամբ անդրադարձել է բանաստեղծության խորհրդանիշին:<br>4. Չի արտահայտել և հիմնավորել իր վերաբերմունքը բանաստեղծության մասին:<br>5. Շարադրանքը լեզվական առումով անթերի չէ. թույլ է տվել ոճական, ուղղագրական, կետադրական, բառի գործածության 5-6 սխալ: |
| 2-3 | 1. Չի ըմբռնել բանաստեղծության հիմնական թեման, չի կարողացել ներկայացնել բանաստեղծի ասելիքը:<br>2. Բառապաշարն աղքատիկ է. բանաստեղծի կիրառած արտահայտչամիջոցները չի կիրառել:<br>3. Կցկտուր է անդրադարձել բանաստեղծության խորհրդանիշին:<br>4. Չի արտահայտել և հիմնավորել իր վերաբերմունքը բանաստեղծության մասին:<br>5. Շարադրանքը լեզվական առումով թերի է. թույլ է տվել ոճական, ուղղագրական, կետադրական, բառի գործածության 7-8 սխալ: |
| 0-1 | 1. Բանաստեղծության տեքստն անտեսել է, շարադրանքը կապ չունի տեքստի հետ: |

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Հասմիկ Հովհաննիսյան